Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի « Մայրենի » (13 դասաժամ), « Մաթեմատիկա » (8 դասաժամ), « Ես և շրջակա աշխարհը » (1 դասաժամ), « Տեխնոլոգիա » (2 դասաժամ), « Կերպարվեստ» (2 դասաժամ), «ԹԳՀԳ» (1 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցը ԴԿՏՀ – ում լրացնում է դիմումը և մուտքագրում հետևյալ փաստաթղթերի լուսապատճենները՝

- դիմում,ինքնակենսագրություն (ձև 1),մեկ լուսանկար 3x4 չափսի
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ), (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝առկայության դեպքում,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596- Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում ՝ կամավոր ատեստավորումից 60 և ավել տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում),
- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի պահանջով հերթական ատեստավորման արդյունքում աշխատանքից ազատված լինելու դեպքում՝ հերթական ատեստավորումն անցած լինելու մասին տեղեկանք,
- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետով) պահանջվող համապատասխան փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Մասնակիցը ներբեռնված փաստաթղթերի բնօրինակները մրցույթին օրվան նախորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում առձեռն ներկայացնում է տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձին, որը դրանք համեմատում է ԴԿՏՀ – ում ներբեռնված փաստաթղթերի հետ,ինչից հետո նույն օրը բնօրինակները վերադարձնում է մասնակցին: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ ,կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև մրցույթին նախորդող աշխատանքային օրը առձեռն

ներկայացնել, իսկ ԴԿՏՀ – ում ներբեռնված փաստաթղթերի դեպքում՝ նույն համակարգում ներբեռնել անհրաժեշտ փաստաթղթերը:

Փաստաթղթերն ընդունվում են **2026թ. հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 9-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 18:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2026 թ. նոյեմբերի 12-ին՝ ժամը 12:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ. Շողակաթ , 10-րդ փող. շ. 1/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 28-74-77 հեռախոսահամարով: